

ՀԱՅՔ

Հ Ա Ն Դ Ի Ս Ը Զ Գ Ը Յ Ի Ն

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Ա Մ Ե Ն Ա Մ Ս Ո Յ 1 Ի Ն Ե Խ 15 Ի Ն
 Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼՆԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.
 202 W. 23d St., New York.
 Տարեկան բաժնեգրինն է ամեն երկրաց համար 2 թալէն կամ 10 Ֆրանք:
 Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն:

Entered as second-class mail matter. at P.O. New York. NY

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Հայ Մարդու Յուցահանդէս յեջմիածին — Պատմութիւն
 Ամերիկայի Հայ գաղթականութեան. Հայ Մամուլն յԱմերիկա
 — Նամակ Սմարանգէն. Պատիւ մնա որում անկէ պատիւ —
 Նամակ Պարսկաստանէն — Նամակ Պոլսկարիայէն — Կառա-
 վարական սոսկալի հարստահարութիւն Բալուի Հայոց վե-
 րայ — Ընդհարմունք ընդ մէջ Հայոց և Թրքաց յԱյնթապ. —
 Հայոց անհանդարտութեան պատճառներն — Քաղաքական,
 Ազգային և զանազան լուրեր:

ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՅՈՒՅԱԶԱՆԴԻՍ

ՅԵՋՄԻԱԾԻՆ

Ա.

Կաթողիկոսական ընտրութեան առթիւ. անցեալ
 Մայիսին, աշխարհի այլ և այլ կողմերէն բարձր կարգի
 եկեղեցական և աշխարհական Հայեր հաւաքուեցան յԵ-
 ժմածին, ուր տեղի ունեցաւ համահայկական մեծ ժո-
 դով մի՝ որպիսի չէր տեսնուած վերջին սերնդոց օրով.
 40 եկեղեցականք և 25 աշխարհականք, գլխաւորապէս
 Թուրքիայէն և Ռուսիայէն, իբրև Հայ Ազգին բնախմբ
 ներկայացուցիչներ, անձամբ ի տես և ի հուպ եկին միմ-
 եանց:

Հայկական Հոգեբանութիւնն ուսումնասիրելու և
 Հայոց յառաջդիմութեան ներկայ վիճակն ճանաչելու
 գերազանց առիթ մի կ'ընծայէր այդ տիեզերական ժո-
 դով, ուր էր տեսանել եպիսկոպոսներէ և վարդապետ-
 ներէ, խմբագիրներէ և գրողներէ, փաստաբաններէ և
 բժիշկներէ կազմեալ Հայ մարմին մի ոչ փոքր. — դիտել
 Հայ մշակութեան ընտրելագոյն ծաղկանց փունջ մի, հո-
 տոտել այդ փնջի բոյրն և զմայլել, զգալ նաև նորա
 փշերն և... քստմնիլ:

Ռուսահայ մամուլն քաղաքավարութեան պարտք
 մի համարեց գովել Թրքահայոց պատգամաւորներն առ
 հասարակ՝ իբրև հիւրեր: «Մշակ»ի խմբագիրն իբրև մը-
 չակ մանաւանդ խօսեցաւ քան առանձնական, և իւր սո-
 վորական խստութեամբ դատեց մշակեալ Հայոց կրթու-
 թեան վիճակն: Յաջ նորա աշխարհական պատգամա-
 ւորաց մէջ հինգ վեց հոգի իրաց առեալ, աշխարհա-
 կանք հանդերձ բոլոր հոգեւորականք «համ մտաւորա-
 պէս անզարդացած», համ էլ վերին աստիճանի ինքնահա-
 շան մարդիկ են: Նրանց մեծ մասի բնաւորիչ գիծը՝ ան-
 կեղծութեան բացակայութիւնն է, և մի և նոյն ժամա-

նակ. — համեստութեան բացակայութիւնը:

Եպիսկոպոսաց մէջէն յոռեգոյն տպաւորութիւն
 գործողն եղած է Հմայեակ Դիմաքսեան, զոր «Մշակ»
 կը կոչէ «Հպարտ, ինքնահաւան, գոռոզ, կռուարար, կո-
 սիտ, կոշտ...» «Հէնց, որ կ'ըսէ, աշխարհական պատ-
 գամաւորներից մէկը համարձակում է ոչ ընտրեմ ասել
 իզմիրեանին, — Դիմաքսեան անմիջապէս գոռում է Ադ-
 ով ըսաւ ոչ ընտրեմ»:

Մաղաքիա Օրմանեան, որ ուսումնական Հայ եկե-
 ղեցականաց փոքր դասուն մէջ նշանաւոր տեղ մի բռն-
 ւած է, և որուն վերայ Սր. Աշըգեան սքանչանալով
 Արմաշու հոգեւորական դպրանոցին ուսուցչապետ և վե-
 րատեսուչ է կարգած, քան զԴիմաքսեանին իսկ վատթար
 ցուցած է ինքզինք: Դիմաքսեան յայտնի կոպտութեամբ
 պաշտպանած է իւր ընտրելին, իսկ Օրմանեան ներքն-
 գործ ճիշդութեամբ: Օրմանեան կաթողիկոսներէ
 դարձած է ի մայր եկեղեցի, բայց և այնպէս նա կը մը-
 նայ կաթողիկ եկեղեցական՝ ոգւով և գնացիւք. սակայն
 մեք Հայքս ոգւոյն չեմք նայիր այնչափ, արտաքին դար-
 ձըն և առերես միութիւնն զմեզ կը շողորորթ է և կը
 գոհացունէ: «Մշակ» կ'ըսէ պարզապէս թէ «Օրմանեան
 ներկայացնում է բուն կաթողիկ եկեղեցականի տիպը:
 Առ երես բարի, բարեսիրտ շատախօս, միշտ ժպտող ու
 բարձրաձայն ծիծաղող, — բայց շատ խեղճ, ինչպէս ա-
 սում են տակէտակ, խորամանկ... Ճարտարախօս բայց
 սօփեսա: Վերին աստիճանի մեծամիտ և փառասէր: Ա-
 մեն ինչ ուզում է աշողցնել եզուխական խորամանկու-
 թեամբ... Եկել էր էջմիածին Աշըգեանի թիկնածու-
 թիւնը ամեն զնով անցկացնելու նպատակով, ամեն տե-
 սակ ինտրիգներ էր լարում որպէս զի իրմեան չանցնի,
 կամ գտնէ իզմիրեանից պակաս քուէ ստանայ (երբ այլ
 ևս յոյս չկար Աշըգեանի թիկնածութիւնն աշողցնելու):
 Իսկ երբ իրմեան ընտրվեց... այնուհետեւ իւր բոլոր
 արտասանած ճառերում Օրմանեան ամենից աւելի ոգե-
 ւորված կերպով էր խօսում իրմեանի մասին, միջից
 կէս էր լինում ցոյց տալու համար որքան ինքն երջանիկ է
 թէ Հայրիկն ընտրվեց»:

Բ

Ըստ գաղտնիութեան «Մշակ»ի, Թրքահայ եկեղե-
 ցականաց «բոլորն» այ ընդհանուր մարդկային մտաւոր
 զարգացումէ այնքան զուրկ են, որ «ամենատարրական
 մտքերը նրանց համար անմատչելի են», և սակայն «բո-
 լորն էլ վերին աստիճանի ինքնահաւան են»: Նա աշ-
 խարհական պատգամաւորացն մէջ միայն գտած է հինգ
 վեց հոգի «վերին աստիճանի համակրելի, ազնիւ, ան-
 կեղծ և սիրելի անձնաւորութիւններ»:

Եթէ «Մշակ»-ի դատողութիւնն ճշմարիտ է, և մեզ կը թուի այն չլինիլ հեռի ի ճշդութենէ, կը հետեւի թէ ի թրքահայ կրթութիւնն աւելի յառաջ գնացած է աշխարհական դասուց մէջ քան եկեղեցականաց:

Տփղիսի «Արձագանք»-ն տաճկահայոց եկեղեցական դասին վերայ խօսելով անցեալներ՝ փորձեց ցուցնել թէ ընտիր Հայ եկեղեցականներ կը գտնուին միայն Տաճկաստանի մէջ, քանզի հոն «եկեղեցին միակ ասպարէզն է այն արտաքոյ կարգի մարդոց համար որոց մէջ վառուող բնածին կրակը կարողանում է փայլել»: Այդ է ահա ենթադրութեանց քան զամենայն ենթադրական և թոյլ տրամաբանութեան նշանաւոր օրինակ: Տաճկահայոց համար եկեղեցական ասպարէզէն զատ կան ուրիշ ասպարէզներ ալ ուր հանճարն կրնայ փայլիլ, և արդարեւ փայլած են անդ ոչ սակաւք հանճարի և տաղանդի կրտսերներ: Անդ եղած են Հայ վէճիկներ—Նուպարփաշա, Արքա-համ փաշա, Դազազեան Յակոբ փաշա եղած են գիւանազի տական և վարչական բազմաթիւ Հայ պաշտօնեաներ, զես պաններ, նախարարներ, քարտուղաներ, ծերակուտականներ, ինչպէս Ճէզայիրցի Մկրտիչ Ամիրա, Սարգիս Էֆ. Պալեան, Մէրվիշէն Էֆ., Օտեան Էֆ., Վասա Էֆ., Խորասանճեան Յովհաննէս Էֆ., Գուլումճեան Պետրոս Էֆ., Համամճեան Սարգիս Էֆ., Սեղրոս Էֆ., Մուրատ Պէյ. Կոստանդ փաշա, Վարդան փաշա, Եսմէր փաշա, Աղաթոն Էֆ., Նուրեան Էֆ., Տատեան Յարութիւն փաշա, Տիգրան փաշա, Պողոս փաշա. Եագուպ Արթին փաշա և այլն: «Արձագանք» մոռցած է նաև տաղանդաւոր Հայոց գոյութիւնն գիտական, գրագիտական, գեղարուեստական և արուեստական ասպարէզներու մէջ ի Տաճկաստան, ուր փայլած են և կը փայլին Պէշիքթաշլեանի, Դուրեանի, Սեթեանի և Թէրգեանի պէս բանաստեղծներ, Մամուրեանի և Պէրպէրեանի նման գրողներ, Չերազի և Քէչեանի կարգէն խմբագիրներ. Ճէզիգեանի, Պէզճեանի և Գուրգէնի արժանիքն ունեցող ուսուցիչներ. Աղաբէկեանի, Իփէքճեանի և Ռուսինեանի Հանգոյն գործիչներ, վերջապէս Բիթապեանի աստիճանէն բժիշկներ:

Ուրեմն թիւր է ըսել թէ Տաճկաստանի մէջ «եկեղեցին միակ ասպարէզն է այն արտաքոյ կարգի մարդոց համար որոց մէջ վառուող բնածին կրակը կարողանում է փայլել»: — Թիւր է «Արձագանք»-ի յառաջագիրն, և ուստի անհետեւական է նորա եզրակացութիւնն թէ հոն «անսովոր խելքի և կամքի տէր» Հայերն բնականապէս եկեղեցականաց մէջ կը գտնուին: Եթէ «Արձագանք» փորձէր «անսովոր խելքի և կամքի տէր» տաճկահայ եկեղեցականաց ցանկ մի յօրինել, պիտի տեսնէր թէ վերի անկատար ցանկին դէմ դնելու արժանի եկեղեցականք ո՞րքան չնչին թիւ մի կը կազմեն:

Սակայն երանի՜ թէ «Արձագանք»-ի ենթադրութիւնն ճշմարիտ լինէր—երանի՜ թէ գիւանազիտական, գիտական և այլ այլ ասպարէզներու մէջ փայլող թըրքահայեր եկեղեցական ասպարէզն ընտրած լինէին, քան զի տաճկահայ եպիսկոպոսին պաշտօնն արդարեւ շատ տաղանդ պահանջող պաշտօն մ'է կրօնական և գիւանազիտական, քարոզչական և քաղաքային միանգամայն:

Ոչ ազգասիրութիւն և ոչ եկեղեցասիրութիւն է այժմու եկեղեցականներն անսովոր խելքի և կամքի տէր, գերազանց անձնաւորութիւններ հռչակել քանի որ «անգարգացած» և «ինքնահաւան» մարդիկ կը ցուցնեն նոքա իրենք զիրենք, փոքր բացառութեամբ: Մեր պականներն լեցունելու եղանակն այդ չէ: պէտք է ընդունիմք մեր աղքատութիւնն որպէս զի հարստանալու ջանք ընեմք:

Գ.

Միւս կողմանէ, արտասահմանի մէջ հրատարակուող թերթ մի որ զՀայաստան արմատական փոփոխութեանց կարօտ կը համարի, զկաթողիկոսութիւնն ոսնած

հառաատութիւն մի համարեցաւ և ընտրութեան պայքարն տեսակ մի ժամավաճառութիւն: Այդ ևս ծայրայեղութիւն է: Եկեղեցականն սքանչելի դեր կրնայ կատարել մեր ազգային փրկութեան մեծ գործոյն մէջ եթէ նա ունենայ իւր պաշտօնին բարձրութիւնն: Կաթողիկոսի ընտրութեան համար բուռն պայքար մղել կ'արժէր, քանզի արժանաւոր և կարող կաթողիկոսէ մի միայն կրնամք սպասել ճշմարիտ եկեղեցականութիւն մի ազգին ընծայելու նախաձեռնութիւնն: Եկեղեցական բարեկարգութիւն ընենէ, ըստ մեզ, ճշմարիտ՝ իրենց կոչման հաւասարող՝ բազմակողմանի զարգացման հասած եկեղեցականներ պատրաստել — այնպիսի առաջնորդներ ընծայել հօտին որք առաջ տանին զնա ոչ թէ ետ: այնպիսի քարոզիչներ որք ժամ մի կամ ժամ ու կէս չխօսին առանց բան մի կարենալ ըսելու, և որք չկարծեն թէ պերճախօսութիւնն է գոռալ բարձրաձայն: Աստ յուշ կը լինի մեզ Ամերիկացի գեղջուկի մի աղօթքն: Խեղճ մարդն գիշերայն դաշտէն վերադառնալու ատեն սառնակ անձրևի կը բռնուի. ուրիշ լոյս չունէր իրեն և ձիուն ուղղութիւն տալու բայց միայն փայլատականց լոյսը: գետակէ մի անցնելու պահուն շուարած էր խօլ խաւարին մէջ երբ որոտմունք կը շարունակուէին բայց փայլատականք չէին հասնէր. յայնժամ գլուխն բանալով սա աղօթքն մատոյց գեղջուկն. — Ո՛վ Տէր, եթէ քեզի տարբերութիւն չընէր, կաղաչեմ հաճէ քիչ մի նուազ աղմուկ և սակաւիկ մի աւելի լոյս հանել: —

Մեք ալ կաթողիկոսէն և պատրիարքէն պէտք է խնդրեմք այնպիսի վարդապետներ հասցունել Հայ հօտին որք ի քարոզելն քիչ մի նուազ աղմուկ հանեն և սակաւիկ մի աւելի լոյս:

Լուսատու եկեղեցականներ մեծ օրհնութիւն են ազգին: Տաղանդի հուրն կրող զարգացեալ եկեղեցական մի աւելի մեծ գորութիւն է ազգին քան նոյն արժանիքն ունեցող աշխարհական գործիչ մի: Սրբազան պաշտօնին շնորհիւ եկեղեցականին խօսքերն աւելի հզօր են ի քակել կամ ի շինել, ի մոլորեցունել կամ յուղղութիւն բերել քան եթէ միևնոյն խօսքերն աշխարհականի մի շրթունքէն արտասանուէին:

Բարեկարգիչն և յեղափոխականն եթէ կ'ուզեն բան մ'ընել այդ մասին, թող չկարծեն թէ պարտին կամ կարեն հին աւանդական կարգերն ջնջելով արմատական փոփոխութիւններ մուծանել, այլ թող ջանան ազգին շինութեան սատարելու վիճակին մէջ դնել զայնըս: Թող աշխատին որ եկեղեցական աստիճանն ծառայէ ոչ թէ կարգ մի տգէտ մարդիկ ինքնահաւան խոչընդոտներու վերածելու ազգին ոտից տռչել գլորուած, այլ բարեւոյն ու ժն և լուսաւորին ճառագայթութիւնն աւելցնելու ի փրկութիւն հայրենեաց:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՀԱՅ ԳԵՂԹԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ

(Շար. Տես թիւ 4, 5, 6 7 և 9)

Ամերիկայի Հայ Գաղթականաց պատմութիւնն գըրել բաղդատաբար դիւրին էր ցորվայր իբրեւ անհատ կ'առնուէինք զայնս. այլ կարի փափուկ և դժուարին կը լինի այն երբ կը սկսինք նկարագրել այդ Հայերն իբրեւ գաղթական մարմին մի, իբրեւ ժողովուրդ, և պատմել նոցա գրական, կրօնական, ընկերային շարժումներն և հաստատութիւններն: Սոցա մասին խօսիլ առանց քննադատելու, առանց անաչառօրէն պատճառոց և արդեանց ներքին յարաբերութիւններն պարզելու՝ պիտի լինէր անարժէք գործ: Կ'ընտրեմք մեք ուրեմն գրել իբրեւ

անկողնակալ պատմիչ՝ Կանխաւ յանձն առնելով Հակա-
ռակորդաց առատահոս գրախօսութիւնն:

ՀԱՅ ՄԱՐԺՈՒԼՆ ՅԱՄԱՐԻԿ

Հայերէն Ամսաթերթ մի Արեգակ անուն, հրատա-
րակուիլ սկսաւ Նիւ Եորքի մօտ, 1889ին, երբ տակաւին
Միացեալ Նահանգաց մէջ թերթ կարդալու հետաքրքրու-
թիւն ունեցողներ սակաւաթիւ էին. Այդ հետաքրքրինե-
րու մէկ մասն արդէն Հայերէն թերթ կընդունէր Եւրո-
պայէն կամ Թուրքիայէն, և ուստի տեղական Հայ Լրագ-
րին ակնարկ մի արձակեցին իբրեւ հետաքրքրական նո-
րութիւն և դառն ժպտով աչքերն ի բաց դարձուցին այն
արեգակէն որ ինքնին խաւարի մարմնացումն էր, կամ թէ
ասենք մի կոյր արեգի ակն: Թերթիկն Հասած էր նաև եր-
գիծաբան Պարոնեանի ձեռքն որ «Խիկարի» մէջ փութա-
ցած էր յորդորել զխմբագիրն հետամտիլ կօշկակարու-
թիւն կամ այլ արհեստ սովորելու:

Ասոր վերայ Արեգակ Հայ երկնից կամարէն յուշիկ
վայր իջնելով առաւ խոնարհ Սուրհանդակի կերպարան և
հետզհետէ իւր քայլեր երազելով կարող եղաւ փոխա-
նակ ամիսն միանգամի չաբաթն մի անգամ հասնելու:
Տարօրինակ ճարտարութեամբ Սուրհանդակ լուրել բե-
րել սկսաւ նոյն իսկ Սուլթանին կանանցոյն ներքնագոյն
չըջաններէն և առաւ Հանրային բարուց ապականիչ Հան-
գամանք, ի տես որոյ Նիւ Եորքի Հայկական Միութիւնն
ստիպուեցաւ 1890 Յունվար 18ի նստին մէջ պաշտօնա-
պէս պարտաւել զխմբագիրն և իւրագիրս յայտարարել
իւր ցաւն ու զգուանք թերթիկին «անվայել, գոեհիկ և
ստալօղ հրատարակութեամբ» դէմ (Տես «Արմէնիա» փետր
8, 1890 թիւն):

Այս հարուածի տակ գետին տապալեցաւ թեթե-
ւընթաց և թեթեւամիտ Սուրհանդակն և ստիպուեցաւ
ջախջախեալ սրունքն դարմանել: Եւ տեսնելով թէ չը-
դարմանուիր, դարձեալ կերպարանափոխ եղաւ, այս ան-
գամ աւելի անոյշ հնչող անուն մի առնելով եղաւ Ազա-
տութիւն: Այլ դիմակն յոյժ թափանցիկ էր, որոյ ներ-
քէնէն կ'երեւէր նոյն երեսն և նոյն ոգին... ուստի և շու-
տով եղաւ աներևոյթ ինքնահալած:

Այդ Արեգակ, Սուրհանդակ և Ազատութիւն անուննե-
րով յաջորդաբար երեցող միամտեայ կիսամտեայ և շա-
բաթեայ թերթի խմբագիրն է Տիգրանակերտցի անուս
երիտասարդ մի, և իւր պատուական անունն է Հ. Էկինե-
եան, զոր մեք կ'առնումք աստ իւր խմբագրական ինք-
նակոչ կոչմամբ՝ ոչ թէ իբրեւ առանձին անհատ:

ԷԿԻՆԵԱՆ ԵՒ ՓՈՐԹՈՒԹԱՆԵԱՆ

Էկինեան Հայոց Հայրենասիրական Միութեան և
նորա Տնօրէնին դաժան հակառակորդ հանդիսացած էր,
ուստի և Փորթուքալեան, երկար ատեն համբերած լի-
նելէ յետոյ, Հարկ դատեց առաջնորդող յօդուածով մի
ջախջախել զԷկինեան: Աստ ի մէջ բերեմք այդ յօդուա-
ծի կշտամբիչ տողերէն մի քանին. — «Կարծէ՞ միթէ,»
կ'ըսէ Փորթուքալեան, «Հերքել մի այնպիսի Լրագրի
գրածները որ ստախօսութիւնը կը Հասցունէ անամօ-
թութեան վերջին աստիճանին, իւր ուղածի պէս խեղա-
թիւրած և ստալօղ կերպով հրատարակելով մինչև ան-
գամ այնպիսի բաներ որոնք Հարիւրաւոր բազմութեան
առջև տեղի ունեցած են... Բայց Սուրհանդակի անամօթ և
ստախօս խմբագիրը այնչափ քաջութիւն կը. զգայ իր մէջ
սուտ խօսելու մասին որ... Ի՞նչ աստիճան դիմացկուն և
կարմրելու անընդունակ երես պէտք է ունենայ հրապա-
րակագիր մը որ... Ինքնին կը Հասկցուի թէ այդ աս-
տիճան անամօթաբար սուտեր գրող մէկը ինչպիսի սու-
տեր ալ չէ կարող յերիւրել և հրատարակել այնպիսի
գործողութիւններ զորոնք հրապարակաւ կատար-
ուած չեն և չեն ալ կրնար հրապարակային քննութեան
ենթարկուիլ»

Այդ խօսքեր Փորթուքալեան ինքն գրած է Է-
կինեանին դէմ, որպէս կրնան ընթերցողք ստուգել տես
նելով Արմիմիաի 1890 Յունվար 25ի թիւն:

Էկինեանի թերթիկն Խիկարի, Հայկական Միութեան
և Արմիմիաի հրապարակային հարուածներն կրած լինելէ
զատ անհամար յանդիմանութիւններ ալ առանձին տե-
ղացած էին գլխուն ամեն կարգի և դասու անհատներ.
ուստի և լռեց, և լռեց իբր մէկ տարի ամբողջ, և Ամե-
րիկայի Հայ գաղթականութիւնն, անուս գործաւորներ
անգամ կը միութարուէին այնպիսի անպատուաբեր և ան
միտ հրատարակութիւն մի իսպառ վերջացած համարե-
լով:

Ո՞վ կրնար երեւակայել թէ թերթն պիտի վերս-
կսէր հրատարակութիւնն՝ ապաստանած լինելով փոր-
թուքալեան այն բազկին որ գինքն անողորմաբար հար-
ուածած էր: Ազատութիւն վերսկսաւ 1891ին իբրեւ ամսա-
թերթ, և 1892ին եղաւ կիսամտեայ: Արմիմիա փառաու-
րապէս և երկար ամիսներ ծանոյց Ազատութիւնն իւր էջե-
րու մէջ, և վերջապէս անոր մի քանի հարիւր օրինակ-
ներն իւր բաժանորդաց յղեց իբրեւ նմոյշ (Տես Արմիմիա
ներկայ տարուան 59րդ թիւն):

Այսպէս «Արմէնիա և Ազատութիւն» հաշտուած,
իրարու փաթուած, մէկ գոտիով կապուած, ընթացան
իսփիւռս աշխարհի, և Արմէնիա, երէց պաշտօնակիցն,
ներկայացուց իւր կրտսեր պաշտօնակիցն Հայ Գաղթա-
կան աշխարհի, իւր թէ ըսել ուզելով իւր բաժանորդաց
— ահա իմ սիրելի և պատուական եղբայրակիցն, դիւ-
րաւ կարմրող կակուղ երես մ'ունի սա, սուտ խօսելու
քաջութիւն ամենեւին չզգար սա իւր մէջ, սորա խօսքե-
րուն լաւ միտ դրէք...

Այս է խո՛ր քաղաքականութիւն: Փորթուքալեան
կ'ատէ Հայքն, ուստի և ոյժ կուտայ Ազատութիւնին յո-
րում երբեմն մինչև հինգ կամ վեց յօդուածներ մէկէն
կը գտնէ Գաբրիէլեանի դէմ, յօդուածներ այլանդակ
ստախօսութեամբ՝ ինքնայայտ զրպարտութեամբ լի,
հրապարակային դէպքերն խեղաթիւրող նողկալի յօդ-
ուածներ ձիւղ այն անասկէն որոց դէմ Փորթուքալեան
ինքն այնքան սրտմտութեամբ կը բողբէր... երբ իրեն
դէմ ուղեալ էին:

Փորթուքալեանի այս ընթացք մեծ ցաւ պատճա-
ռած է անշուշտ իրեն լուրջ համակրողաց ալ: Այդ ըն-
թացք գործնական բացատրութիւն մ'է իւր ազգային
քաղաքականութեան և բաւերէ աւելի որոշ կերպով կը
յայտարարէ սա ոկզբունքն թէ ստալօղ խմբագրի մի
զրպարտութիւններն կրնամք քաջալերել և տարածել
երբ անոնք ուղղեալ լինին մեր հակառակորդաց դէմ:

Այդ ընթացք կը ցուցնէ թէ Փորթուքալեանի ան
ցեալ սրտմտութիւնն բուն ստութեան և նուաստու-
թեան դէմ չէ եղեր: Թէ ինքն կարող է համբուրել
զայն ստախօս շրթունք և զա՛յն չկարմրող ամուր երես
զոր ապտակած էր...

...Թէ ինքն իրեն գործի կրնայ առնուլ սուտն, և
զինքն անկումէ փրկելու համար որդնոտած նեցուկներու
անգամ կը հաւատայ... կը յենու այն եղէգին զոր ինքն
ջախջախած էր, նեցուկ կ'առնու աղոտս գրիչ մի որ իւր
կողն ծակելու միայն կը ծառայէ:

Փորթուքալեան ահագին սխալ գործեց Ազատու-
թիւնն թեւարկելով. որքան գիտեմք, նա քան զայդ ա-
ւելի ահագնի սխալ մի գործած չէր յընթացս իւր ամ-
բողջ ազգային գործունէութեան: Նա կրած է և պիտի
կրէ այդ հրէշաւոր սխալի հետևանքն անվերջանալի,
պիտի ամաչէ և պիտի ամաչեն իւր համակրողք յաւիտե-
եան...

Այդ սխալ լուր գատողութեան սխալ չէ, միայն
քաղաքական տխմարութիւն չցուցներ, այլ բարոյական
ճաշակի և զգացման ողբալի վիճակ մի...

Բարոյական օրէնքներն ալ բնական օրինաց պէս
անյեղելի և անաւոր են. չէ և չէ՛ հնար անոնց դէմ ելնել

առանց պատժուելու, առանց ջախջախուելու...

ԷԿԻՆԵԱՆԻ ԹԵՐԹԻԿՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆ

Հայկական Միութեան ի պատիւ պարտիմք յիշել թէ նա 1890ի յայտարարութենէն յետոյ որոյ հարուածով դադարեցաւ «Սուրհանդակ» վերստին առիթ ունեցած է իւր սրտամտութիւնն արտայայտել «Ազատութիւն»ի դէմ: Անցեալ Ապրիլ 16ի նստին մէջ Միութիւնն սուրբ բարկութեան հրեղէն լեզուներով պաշարեց զԷկինեան:

Արհամարհոտ լռութեամբ թողած էր որ նա հաշէ իւր դարձապարին մինչև որ շունչն սպառի, բայց նոյն երեկոյին ալ չկրցաւ զսպել ինքզինքն և բերանն բանալով ժայթքեց իւր բոլոր զսպեալ նողկանքն գծուծ խմբագրին երեսին: Հետզհետէ խօսեցան այլևայլ ազդեցիկ անդամներ: Բժիշկ Մ. Տատրեանի և Պօղոս Յակոբեանի յանդիմանութիւններն կարկուտի սասակութեամբ տեղացին և հանդիսականաց ուժգին և յաճախ կրկնեալ ծափահարութիւնք ալ իբրև փոթորիկ անօրինակ ուժգնութեամբ զարկին փաստից կարկուտն Էկինեանի ժպիրհ երեսին:

Պ. Յակոբեանի առաջարկութեամբ նոյն երեկոյ յանձնախումբ մի անուանեցաւ որոյ յանձն եղաւ գրել յանուն Հ. Միութեան յանդիմանական նամակ մի առ Էկինեան, թերթին մէջ հրատարակելու նպատակաւ: Նա մակի մէկ օրինակն ալ ՀԱՅԲԻ ուղղուած էր որպէս զի սա հրատարակէ եթէ Էկինեան մերժէ հրատարակել: Ահաւասիկ նամակի պատճէնն:

Առ Խմբագիրն

«Ազատութիւն» Լրագրի

Մեծ տհաճութեամբ տեսանք ձեր թերթի մէջ Հայկական Միութեան ճորդ տարեդարձի և Վարդանայ նահատակութեան յիշատակի հանդիսին խեղաթիւրեալ նը կարագրութիւնը: Այս առաջին անգամ չէ որ կը տեսնուին ձեր թերթի մէջ հակակրական ակնարկութիւններ Հայկ. Միութեան դէմ որոյ մէկ անդամն էք: Այս անգամ աւելի յայտնի թշնամութեամբ ելած էք խժըժել վերջին հանդիսին յայտագրին մէջ նշանակուած վայրկեաններէն ուսեալ մինչև օշարակին համը: Գայով Վարդան Մամիկոնեանի անուամբ արտասանուած ճառին, այս մասին ձեր ատելութիւնն շափն ու սահմանն անցնելով դրդած է զձեզ ընել անձնական այնպիսի անճաշ ակնարկութիւններ և այնպիսի անարդ խժըժանք որ կը ցուցնեն ողջամիտ ընթերցողաց թէ դրողն որպիսի ոք է և ինչ ոգւով կը գրէ:

Ճշմարտութեան ստուերն իսկ չկայ ձեր այն նկարագրին մէջ թէ ատենախօսն ժողովրդեան հակակրական ցոյցերէն ստիպուած՝ անաւարտ թողած է ճառն և վարագործին ետին քաշուած: Ներկայ բազմութեան գոհու նակութեան եռանդուն ցոյցերը չտեսնելու և ջերմագին ծափահարութիւնները չլսելու համար մարդ այն երեկոյ բոլորովին կոյր և խուլ և կամ տեսնել ու լսելէն ետքը հակառակը գրելու համար ալ յայտնի սուտեր հրատարակելու վարժ լինելու էր:

Յաւալի է մեզ տեսնել որ խմբագիր մը նուաւտանայ այն աստիճան խեղաթիւրել հրապարակաւ տեղի ունեցած դէպք մը:

Ըստ որոյման Հայկ. Միութեան ընդհանուր ժողովոյ զայս կը յղեմք ձեզ ի հրատարակութիւն:

15 Յունիս 1892
Նիւ Եորք

Ի դիմաց մասնախմբին
ԱՐՇԱԿՈՒՆԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ
ՊՕՂՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ
Մ. Գ. ՏԱՏՐԵԱՆ

Նոյն շաբթուն ընդունած էինք հետեւեալ նամակն զգայուն Հայու մի գրչէն:

ՅԻՄԱՐ ԿԱՏՈՒ ՄԻ

496, Ա. Էվինիւ, 20 Ապրիլ Ն. Ե.

Խմբագիր Տէր,

Պ. Էկինեանի թերթին մէջ, որ լրբութեան արուեստահանդէս մ'է եղած միշտ, մեծ ցաւով կարդացինք Հայկ. Միութեան տարեդարձի հանդիսին, մասնաւորապէս Վարդանայ ներկայացման մասին խժըժանքը: Վարդան պատկառելի կերպով երեւելով բեմին վրայ՝ իւր ազդու ատենախօսութեամբ յուզեց ժողովուրդը, որ իւր բուռն ծափահարութեամբք դարձեց ժողովուրդին և վերստին ի բեմ կոչեց ատենախօսն:

Աղէկ չէ՞ր լինէր, Պ. Էկինեան, որ եղածին պէս պատմէիք, որ աւելի դիւրին ալ պիտի ըլլար, քան թէ եղածէն բոլորովին տարբեր ներկայացնելու համար պոչաւոր սուտեր յօրինելու յոգնէիք: Բայց կ'երևի թէ սուտ շարադրելն ձեզ աւելի դիւրին է: Էհ, ամեն բան վարժութիւնով կը դիւրանայ կ'ըսեն, և դուք շատ առաջ գնացած էք այդ վարժութեան մէջ: Եւ այդ է պատճառը որ ձեր պոչով սուտերը պոչով աստղերէն շատ աւելի յաճախ կը տեսնուին: Դուք սուտ չինելու գործարան մնէք:

... Կաղաչեմ, ըսէք, Պարոն Էկինեան, ձեր ընթացքն ի՞նչ տարբերութիւն ունի ոսկերչին խանութը գողութեան մտնող կատուինէն որ խարտոց մը գտաւ և սկսաւ լիզել զայն, և տարօրինակ հաճոյք մը զգալով շարունակեց լիզել մինչև որ լեզուն արիւնեւելով մեկնեցաւ արիւնաթաթաւ:

Դուք ալ կատուին բազդին արժանացած էք, բայց անոր չափ խելք չունիք: Դեռ պիտի լիզէ՞ք... :
Մ. ՄԱՆԱԻԱԶ

Ամերիկայի Հայ Գաղթականութեան վերայ ներկայ յօդուածով ջանացինք ցուցնել թէ Ամերիկայի Հայեր այնքան բան չհասկնող և այնքան տգէտ չեն որքան Ազատութիւնի նման հրէշ թերթի մի նոցա մէջ գոյութիւնն կրնայ կարծել տալ հեռուն գտնուողներուն: Կարծեմք թէ ցուցած եղանք նաեւ թէ այնքան հարուածներու ներքեւ ընկճած լինելէ յետոյ՝ եթէ նորէն ոտքի ելաւ այդ հրէշ, նորա ձեռքէն բռնողն եղաւ ոչ ամերիկաբնակ Հայն:

Հարմարեալ

ՆԵՄԵՆԿ ՍՄԵՐԵՆԳԻՆ

Մեծ. Խմբագիր «Հայք» պատուական թերթի ի Նիւ Եորք

Ազնիւ Հայրենասէր,

Այսօր—Հայոցս համար վշտալից օրս—այնինչ հարստահարեալ եղբարք մեր—գոգջիր ազգն ողջոյն—ձայն բարձրացուցանելով փրկութիւն կ'աղաղակէ, և այնինչ Մայր-Հայաստան կը հեծէ ընդ լծով բռնապետութեան անօրինաց, և յորժամ դառնացեալ և ցասամբ լի են սիրտք մեր, և աստ՝ անդ ի խնդիր եմք և գոչեմք օգնութիւն, օգնութիւն, արդարեւ զայրոյթ անհնարին ի վերայ գայ ի նկատելն թէ ի միջոյ մերմէ յերեւան եկեալ են դաս մի խմբագրաց որք լոկ վասն անձնական չափն և փառասիրութեան, զամենայն ճիգն իւրեանց թափեն առ ի քանդել զհիմն այն շինուածոյն որոյ սկզբնաւորութիւն լեալ է ի ճշմարիտ զաւակաց Հայկայ, յայնպիսի եռանդուն Հայրենասիրաց յորոց շաւղի պարծանս զգամ տեսանել այսօր և զՁեզ անընկճելի յարատեւութեամբ:

Այդպիսի բազդախնդիրք որպիսի են վերոյիշեալ խմբագիրք թերեւս կարող լինիցին պատրել զհասարա-

կուլթիւնն, և թերեւս առ ժամանակ մի փայլուն լինիցին պարագայը հանգամանաց նոցին, սակայն համոզեալ եմ ես բոլորովին զի թէ և ժամանակն ընձեռէ այդպիսեաց յաջողութիւն կարճատեւ, սակայն և այնպէս ճշմարտութիւնն յարակայէ յաւիտեան:

Այլ սակայն՝ ըստ որում արգելուին բարեգոյն է քան բուժելն, որպէս և վասն հասարակաց օգտի արժան է արդարեւ զնկատողութիւն իմ առնել աստանօր՝ զեզրակացութիւն նորա թողլով յարգոյ ընթերցողաց:

Իրաւ է զի բազումք բազմիցս դիտեալ ինձ թէ այսպէս կոչեցեալ հայրենասիրական թերթք մեր տակաւ առ տակաւ հեռացեալ են յիւրեանց իսկական ծրագրոյն, քաջայայտ է՝ զի այսօր առաւել քան մի թերթ տուեալ են և տան տակաւին ցոյցս իսկարութեան իւրեանց յայսմ մասին: Փոխանակ ձայն մարդասիրութեան բարձրացուցանելոյ, փոխանակ սիրոյ, միութեան և հայրենեաց դատին ջատագով և պաշտպան կալոյ, անձնական յարձակմունս առնեն ընդդէմ Ձեր և այլոց: Լի են թերթք նոցա թշնամանօք և ատելութեամբք, կրճտեն նոքա ստէպ զատամունս իւրեանց ի վերայ լաւացն, և խածնելով խածանեն զընտանիս փոխանակ բողոք ամբառնալոյ ընդդէմ անգթութեանց և խժոժութեանցն մոլեռանդ և վայրագ թրքաց և փրդաց:

Եթէ հայրենասիրութեանն խանդ դոցա և դոցա նմանեաց կայանայ յայդմ և եթ, եթէ այդչափ է միայն սէրն դոցա վասն ազգին, ցանկալով ցանկամ ես՝ և ընդ իս ոչ սակաւք, զի ի բաց ձգեսցեն յինքեանց դոքա ըզկեղծ սուր և զրիչ իւրեանց, լռելով լռիցեն և դառնալով յանյիշատակ առանձնութիւն, լաւագունիցն քան զինքեանս թողցեն զասպարէզ գործունէութեան. վասն զի ճշմարտիւ ասել, ժանտախտ են այդպիսիք յազգի մերում, և դոքա միայն առաջնորդող են ազգին յայն քառասական աստիճան, յորմէ ջանայ նա յամաց հետէ զերծուցանել զինքն:

Ներքին անմիաբանութիւն ողբալի է միշտ և վըտանգաւոր յոյժ, ուստի պարտաւոր է ամեն ուշիմ և խոհուն անձն ջան ի գործ դնել բառնալ ի միջոյ զհեղինակս երկպառակութեանց, և չտալ բնաւ տեղի և սնունդ զարգանալոյ:

Իբր պապոցոյ բողոքանացս յառաջ բերեմ աստանօր վասն հայրենակցացս ուսումնասիրութեան օրինակ մի, և այս է թերթ մի որ հրատարակեալ լինի ի Ձերդ գաղթական մասին, և որ կրէ ի ճակատու «Ազատութիւն» տիտղոսն—բառ նուիրական զոր սրբապղծէ հրատարակող նորին: Սիւնակը սորին լցեալ են ցանգ սնտոյ յարձակմամբ ընդդէմ Ձեր՝ և զուտ հայրենասիրական ձեռնարկից ձեր, և առ ի պսակել զամենայն աշխատութիւն իւր, դնէ նա ի թերթի իւրում ծաղրական նմանութիւնըս արդիւնաշատ և գործունեայ հայրենասիրացն մերոց:

Ո՞րպիսի աչօք նայիցեն արդեօք ուսեալ և դարբ մեր ընդ այսօրինակ արարս: Զի՞նչ կարծիս ունիցին զառաջնորդացն իւրեանց հէք և անուս եղբարք մեր: Այսո՞ւ եղանակաւ արդեօք կամիմք սրբել զարտասուս նոցա: Այսպիսի միջոցօք վերջապէս կամիմք զկարծիս և զկարեկցութիւնս օտարաց ի մեզ ձգել:

Եթէ ունի իսկապէս ո՛ւր է պաշտպան կամ կուսակից այդ թերթի սիրտ ի փորի իւր ընդունակ ճշմարտութեան, օն յառաջ անցեալ պատասխանիցէ ինձ զի լուռ լինիցիմ ես:

Հապա՛ խրատ բարի տամ «Ազատութիւն» թերթի թէ դեռահասակ լինիցի նա և թէ հասակաւոր, զի պատարակելի չաւօք ընթանայ նա: Նման է նա գայլոյ որ զմորթ գառին արկեալ է զիւրեւ: Նշանակ նորա է Ազատութիւն, ոսկայն գործքն այնչափ հեռի են ի նպատակէն որչափ Արեւմուտք յԱրեւելից: Յանձն առնու նա լոյս և ճշմարտութիւն քարոզել, սակայն ինքն ի խաւարի խարխալէ:

Ձեռնձգութիւն նորա և կամ մասնակցութիւն ի հայկական կարեւոր և ծանր խնդրի յաղետալից եւս յանգիցի, վասն զի յոյժ կենսական է այս խնդիր, կարօտ հետեալպէս յոյժ մտաւոր տեսութեան և հանճարոյ յորմէ իսպառ թափուր ցուցանէ նա պանծն:

Մտարանգ, 25 Մայիս 1892

ԻՐԱՒԱՍԷՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

... Խմբագիր

Երկու ամիս Պարսկաստանի մէջ ճանապարհորդած և երկրին Հայերուն հետ շփուած լինելով, այժմ կրնամ ձեզ ըսել թէ ընդհանուր տպաւորութիւնն զոր ընդունեցայ, շատ տխուր է:

Պարզ կը տեսնուի թէ Պարսկաստան աւելի աղքատ երկիր մ'է նիւթապէս, և աւելի անբարոյական քան թէ Թուրքիա:

Պարսկաստանի Հայերն ալ աւելի խեղճ են նիւթապէս և բարոյապէս քան Թուրքիոյ և Ռուսիոյ Հայերըն:

Թաւրիցի մէջ յիրաւի հարուստ և յաջող գործ ընող Հայեր կան, բայց ամենն ալ Գարատաղէն եկած գաղթականներ են:

Պարսկաստանի մէջ ընկերային երեւոյթ մը դիտեցի, զոր չգիտեմ ինչ հայերէն բառով ճշգիւ կրնամ բացատրել: Ինքն սպասաւոր լինելու արժանիքն հազիւ ունեցող մարդիկ անգամ սպասաւոր կը պահեն. ձեռքով գործ մ'ընել, ծառայական աշխատութեան կարգի ու է բան մ'ընել մեծ անպատուութիւն կը համարին իրենց: Այս տրամադրութիւնն առակօրէն բացատրելու կը ծառայէ այն պէպէն յորում Պարսիկն Հանդերձին վըրայ ինկած կրակը թօթափելու համար սպասաւորին ձայն կ'արձակէ, աւելի լաւ սեպելով որ այրի հանդերձն քան թէ փութայ ինքնին մատի հարուածով մը կրակը վար ձգել:

Պարսիկ և Հայ այսպէս են. և անշուշտ այդ սուտ վեհանձնութեան սին հոգին Պարսիկներէն փոխանցուած է Հայերուն:

Պարսից Շահին առ իւր հայ հպատակուն համակրութեան մասին շատ լսած էի: Այդ նկատմամբ զգացումներս բաւական եղանակաւորեցան: Կ'երեւի թէ արեգակնափայլ համակրութիւնն չծառայեր միայն անիրաւութեան դէմ պաշտպանելու Հայերն, այլ և յաճախ զնոսա ի չարագործութիւն մղելու: Այս շատ զարմանալի պիտի թուէր ինձ եթէ այս ճանապարհորդութենէս առաջ ուրիշէ մը լսէի: Շահին չափազանց թոյլ կամ երես սուղ կառավարութիւնն ալ այնքան կը ծառայէ անկիրթ մարդիկին վատթարացնելու որքան Սուլթանին անխիղճ բռնապետութիւնն:

Ուրիշ բան մ'ալ յաճախ ուշադրութիւնս գրաւած է այս ճամբորդութեան մէջ: Հայերն իրենց արտաքինին շատ անհոգ են մանաւանդ Պարսկաստանի մէջ: Վրացիներն որք խելքով շատ աւելի վար են, լաւ հոգ կը տան ին արտաքին երեւութի: Ի Պարսկում, հանրային պաշտօնատան մը մէջ, տեսայ յաղթահասակ, վայելչագգեստ, փառաւոր մօրուօք մարդ մը, և կարծելով թէ աւագ պաշտօնեայ մ'է, չհամարձակեցայ իրեն դիմել ինքրելու համար տեղեկութիւն մը որում պէպք ունէի: Հետեւեալ օրն տեսայ թէ նոյն անձն աննշան երեւոյթով ռուս պաշտօնէի մը հրամաններն տղու մը խոնարհութեամբ ծառայաբար կը կատարէ, և իմացայ թէ վրացի մ'է: Մեծ եղաւ հիասթափութիւնս: Սակայն սա դասն լաւ տպաւորուեցաւ մտքիս վրայ թէ արտաքին երեւոյթըն խնամել կ'արժէ, և մանաւանդ Հայերն լաւ կ'ընեն եթէ իրենց սրամտութեան և աշխատասիրութեան վրայ աւելցունեն արտաքին վայելչութիւն և կոկիկ հագուստ: Պարսկաստան ... Մայիս 15, 92 ՌԻՉԵՐՈՐ

ՆԱՄԱԿ ՊՈՒԼԿԱՐԻԱՅԷՆ

ԲՈՒՍՆՈՒՐ, 26 Յունիս 1892

Նախորդներովս ձեզ իմացուցել եմ Սիսիանի Մայիս 16ին այսր ժամանակը: Նա զբաղեցաւ Հայ բանտարկեալներուն նամակներն թարգմանելով Բ. Դրան յղելու: Դի քանի անգամներ ծարճէ՛վօ ալ զնաց, որ քաղաքին դէմն է, քառորդ ժամ հետի, Տաճկաց հիւպատոս Յակոբ Գաղաճեանի հետ բանակցելու և թուանշանօք հեռագիր տալու, զի ինքն հիւպատոս չլինելուն համար աստ իրեն թոյլ չեն տար այդպէս ընել: Մայիս 22 ին Հնչակեան ընկերութեան անդամներէն 15 տարեկան պատանի մը, Պ. Ֆիլիպ Հաղբեան անուն, ի ներկայութեան Սիսիանի և տեղւոյս հանրային դատախազի և այլ բազում պաշտօնէից հարցաքննուեցաւ թէ «ի՞նչ են այս ուսմաներն որ քու ընկերները պատրաստած էին»: Հաղբեան ամենայն քաջութեամբ պատասխանեց թէ ատոնք ոչ մեր բարի իշխանին և ոչ ձեր Սուլթանին համար էին պատրաստուած, այլ ձեզ նման վատ մատնիչներին համար: — Այս համարձակ պատասխանն յոյժ հաճոյ թուելով պաշտօնէից, ազատ արձակուեցաւ պատանին:

Մի նորութիւն. ս'է անցորդ, իմա՛ Հայ անցորդ, մի քաղաքից այլ քաղաք կամենայ գնալ ի Բուլգարիա, պարտաւոր է վերցնել մի անցագիր, ապա թէ ոչ հարցաքննութեանց և ներութեանց կենթարկի:

Սիսիան այսօր մեկնեցաւ ի Պօլիս, տանելով իր հետ վատ թիւթիւնճիթի բալոր երկասիրութիւններէն մի մի օրինակ, և այլ գրութիւններն: Այժմ լուր կայ թէ այդ պաշտօնէի մեկնումին առթիւ Հայ բանտարկեալք ազատ կը թողուին որք Մայիս 25ին վերստին բանտարկուած էին, այսինքն Փրէնկիւլ Ոսկերչեան, Պատուաւ Կարապետ Պապուխեան, Կարապետ Այտնեան և քոյրն Նուստուֆար Մովսէսեան, Յարութիւն Հէքիմեան, Տէմիրճի Միսաք Գասպարեան և Արմենակ Ունճեան:

Վատ թիւթիւնճիթն այժմ ի Պոլիս վեց թիւովար մակուկով ծովի վրայ լրտես է դառել: Նաւերի անցորդները քննութենէ անցունելէ յետոյ ազատ կը թողու. յեղափոխականներ գտնել կը յուսայ ճամբորդներէն:

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՍՈՍԿԱԼԻ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱԼՈՒԻ ՀԱՅՈՑ ՎԵՐԱՅ

(ՊԼԻՈՒ ՊՈԼՔԷՆ)

Տէր,

Առ ի տեղեկութիւն պատիւ ունիմ ձեզ տեղեկագրել հետեւեալ դէպքն, յորում կը պարունակի բազում Հայերու եօթնամեայ բանտարկութեան դատապարտութիւն ի ձեռն Արդընի Մատէնի Նեղեռնադատ Ատենին:

Կ'երևի թէ իբր վեց ամիս առաջ Բալուայ հայաբնակ թաղից ոմանց մէջ գողութեան դէպքեր պատահած լինելով, նոյն թաղի բնակիչք, ինչպէս սովորութիւն է, մի քանի գիշերներ հրացան արձակած են գողերն վախցունելու և փախցնելու մտօք: Գիշեր մի, սակայն, շարունակած են հրացան արձակել մինչև մի քանի հարիւր անգամ: Ծայթմունք և աղմուկ կը տալանապեցունեն գայմազամն, որ կարծելով թէ քաղաքին մէջ խառնակութիւն տեղի կ'ունենայ, հեծեալ ոստիկաններ հետն առած կը ճեպէ ի վայրն. ուր կը գտնէ ի փողոցս հաւաքեալ բազմութիւն Հայոց գինեալ և զրգռեալ: Հրաման կ'ընէ նոցա 17ին ձերբակալում և բանտարկութիւնն իբրեւ պարագլխոց՝ ուշ չգնելով նոցա բողոքին թէ անմեղ են և ոչ բացատրութեանն թէ ինչո՞ւ այնպէս զրգռուած էին: Գայմազամն կը հեռագրէ առ կուսակալն Տիգրանակերտի՝ ըսելով թէ Հայեր ի Բալու կը փորձեն կառավարութեան դէմ գնել: Կուսակալն հարկաւ կը հաղորդէ զայս Բ. Դրան և միանգամայն հրա-

հանգ կուտայ Արդընի Մէտէնի կառավարչին երթալ ի Բալու և դէպքն քննել. այս քննութեան արդիւնքն կը լինի ամբաստանելոց փոխադրումն ի Մատէն, ուր, յետ իբր հինգ ամիսներ բանտին մէջ անցնելու, կը դատուին բանտարկելոց ինն կ'արձակուին և մնացեալք իբրեւ խառնակիչ վճիռ կ'ընդունին եօթնամեայ բանտարկութեան: Ձեմ կարող առ այժմ ասել թէ այս պարզ բանտարկութիւն կը նշանակէ կամ թէ տաժանակիր աշխատութիւն:

Դատաւարութիւնն տեղի ունեցած է ի դռնբաց Ատենի, ուր հետաքրքիր կամ բարեկամ հանդիսատեսներու մեծ թիւ մի ներկայ գտնուած է. և ես իմացայ այլ և այլ աղբիւրներէ թէ Ընդհանուր Դատախազին կողմանէ յառաջ բերուած չէ ո և է փաստ մի՝ հաստատող թէ ամբաստանեալք կառավարութեան դէմ ելնելու ընդդէմն ունեցող բան մի ըրած լինէին. միայն յումպէտս հրացան արձակած և պոռացած էին, ձերբակալման պահուն, թէ՛ եթէ կառավարութիւնն անկարող էր իրենց անձերն և ստացուածքն պաշտպանելու, իրենք պիտի գիտնային իրենցմով ընել զայդ: Այս խօսքն կառավարութիւն խեղաթիւրած էր իբրեւ զրգռիչ յայտարարութիւն առ ի յարուցանել Հայերն ընդդէմ կառավարութեան:

Պարտիմ դանց չընել և զայն թէ դատապարտեալ Հայերն իսկոյն բողոքեցին Վառաքել Ատենին այս խիստ վճիռն բեկանել տալու համար. նոյն ատեն հեռագրական աղբերագիր մ'ալ ուղղեցին Սուլթանին, խնդրելով նորա կայսերական գթութիւնն: Յուսալի է թէ նորին Կայսերական Վեհափառութեան հրամանաւ, որոյ արդարասէր հոգածութիւնն առ իւր հպատակ քաջածանօթ է, վերոյիշեալ Ատենն պիտի ձեռք առնու խնդիրն, և արդարութիւն ընէ դատապարտելոց բեկանելով այս վերջին աստիճան յախուռն և խիստ վճիռն, քանզի կը լսեմ թէ դատապարտելոց մէջ կան մինչև իսկ այնպիսիներ որք բնաւ մասնակցութիւն ունեցած չեն դէպքին, այլ իբրեւ պարզ հանդիսականներ գտնուած են փողոցին մէջ:

ԹՈՎՄԱՍ ՊՈՅԱՃԵԱՆ

Փոխ-հիւպատոս առ հիւպատոս Հէմիդըն

ԸՆԴՀԱՐՄՈՒՆԻՔ ԸՆԴ ՄԷՋ ԹՐԲԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ

ՅԱՅՆԹԱՊ, ԿԻԼԻԿԻԱ

Տէր,

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեր Վսեմութեան թէ քանի մ'ամսէ ի վեր անհանդարտութիւն կ'երևի ընդ մէջ ստորին կարգաց Թրքաց և Հայոց՝ ծագումն առնլով անկարեւոր յարձակումներէ և չօրհաններէ, որ վերջապէս իբր տառնդութ օր յառաջ յանգեցաւ ընդհարում մի յորում երկու Հայեր վիրաւորուեցան: Այս վերջնոց բարեկամք վայրապար, ինչպէս ինքեանք կ'ըսեն, ջանացած լինելով շարժելու իշխանութիւնն ի ձերբակալել ոճրագործներն, բռնի մուտ գործեցին Թրքի մի տունն, ձերբակալեցին զնոսա և յանձնեցին իշխանութեան:

Այս գործողութիւն աւելի վատթարացուց իրաց վիճակն, և զրգռեց Միւսլիմաններն ցա'յն աստիճան որ Բերիոյ հեծեալ ոստիկանութեան պիտն յղուեցաւ յԱյնթապ ոստիկանօք հանդերձ, և բաղում ձերբակալութիւններ գործուեցան ե'ւ իսլամներէն ե'ւ Հայերէն, և այժմ բաւական հանդարտութիւն կ'երևի: Հայք կը գանգատին, սակայն, թէ կառավարութիւնն կ'ուզէ քաղաքական գոյն տալ այս դիպաց, և հետեւապէս տագնապել և բանտարկել տարապարտուց:

Տիար ոմն որոյ դատողութեան կը վստահիմ, կը գրէ ինձ ամսոյս 2ին հետեւեալ. — «Բաղաքական կացութիւնն յԱյնթապ յոռի է: Ի սկզբան անդ դարնան փոքր ընդհարում մի տեղի ունեցած էր Թրքաց ոմանց և զաւիկն տօնող Հայոց ոմանց միջեւ, յորում Թուրքք տակ մնացած էին: Յայնմ հետէ իբր երթալով վատթարա-

ցան և այժմ ծանր վտանգ կայ: Կառավարութիւնն արթուն է, սակայն և մեծ թուրք Աղաներուն ընթացքն մասնաւոր դովութեան արժանի է: Սոքա հաւանօրէն 2 կամ 3 եօթնեակ առաջ խափանեցին ջարդ մի իրենց հաստատութեամբ: Մեծ վտանգ այժմ այն է որ կառավարութիւնն սուտ վկաներ պիտի ընդունի ընդդէմ Բրիտանիոյ: Հայ երեւելեաց մին այժմ ի բանտի է այն ամբաստանութեամբ թէ ուրիշ Հայ մի գրգռած է ՀայՇոյեղու տաճկի մի մինչ սա կ'աղօթէր ի մղկիթի: Ամբաստանութիւնն հաւանօրէն գլխովին անհիմն է: Կացութիւնն կը թուի սակայն լաւագոյն լինիլ երկու օր առաջուան բաղդաւամբ, թէպէտ և դեռ շատ անկարգութիւն կայ ի քաղաքին:»

Թ. Ս. ԵԱԿՕ

Առ Սըր Ու. Հուայթ, Յուլիս 9, 1891, Բերիա: (Տես Պլիու Պուք, Երես 64)

ՀԱՅՈՑ ԱՆՀԱՆԴԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ

Նոյն անձն Յուլիս 15ին գրելով առ Հուայթ, ի մէջ այլոց կըսէ հետեւեալն իբր ընդհանուր խորհրդածութիւն.— «Դիտելով այն ամենէն որ կը տեսնեմ և կը լսեմ, անտարակուսելի կ'երևի թէ Բերիոյ կուսակալութեան մէջ ընդդէմ թուրք կառավարութեան Հայոց անհանգարտութիւնն որ կ'արտայայտուի իբանս և յանկարեւոր ապստամբական արարս որք ոչ յայլ ինչ կը ծառայեն բայց միայն իշխանութեանց երկիւղն աւելցնելու և գրգռելու, յառաջ եկած է ինչ ինչ զուգընթաց պատճառներէ, ինչպէս է տեղական դատարարակութեան տարածումն նոցա մէջ, մեծապէս նպաստեալ Ամերիկացի միսիոնարներէ, ազդեցութիւնն զոր կ'ընդունին թըղթակցութեամբ իւրեանց Հայրենակցաց հետ որ յեւրոպա և յԱմերիկա, և վերջապէս Գաղտ Յանձնախմբոց պատուիրակներուն հրահանգներն:»

ԵՅԼ ԵՒ ԵՅԼԻՔ

ԳԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

—Տի. Բատովիձ, Կ. Պոլսոյ գերմանական դեսպան, կրկին և կրկին աշխատած է բերել զՍուլթան Համիտ ի հաւանութիւն այցելել փոխադարձաբար զԿայսր Կիյոմ, որ թրքաց փառաշահին ի տես գացած է երեք տարի առաջ: Փատիշահն պատասխանած է թէ օսմանեան արքունեաց աւանդութիւնք չեն ներեր իրեն ուղեւորիլ յօտար երկիր, և մեծ ցաւ յայտնած է որ այս պատճառաւ չէ կարող այդ բաղձալի այցելութիւն ընել: Այս մերժման յռի տպաւորութիւնն մեղմելու մտօք որոշած է զՀոպ Փաշա յղել իբր յատուկ պատգամաւոր առ Գերմանիոյ Կայսրն, ի յայտնել նմին Վեհափառութեան թէ որքան ցաւ է Սուլթանին թէ չկրնար այցելել:

Վերջին լուր մի կը ծանուցանէ թէ Տի. Բատովիձ Պալսոյ դեսպանութենէն հանուած է:

—Անցեալ տարի երբ Անգղիացիք Սիկրի կղզին եւլան զինուորական կրթութիւններ կատարելու, Պալատն շատ յուզուեցաւ: Այս տարի անգղիացի ծովապետն կանխաւ Սուլթանին հաւանութիւնն խնդրած է նոյնպիսի գործողութեան մի համար, և փառաշահն ցուցնելու համար իւր սրտագին յօժարութիւնն հրաւիրած է զծովապետն այցելել զԿ. Պոլիս:

—Հնտախտն (քոլէրա) Պարսկաստանի մէջ ահաւոր կոտորած կ'ընէ և կը տարածուի. արգէն ի Ռուսիա ևս փոխադրուած է ախտն և կը տարածուի ի հեճուկս ըզգուշութեանց:

—Պաթումէն եկող նաւերն ի Կ. պոլիս տաօնսրեայ քառանթինա կը կրեն:

—Հրէայ յանձնախմբք մեծ ճիգ կը թափեն թուրք կառավարութենէն արտօնութիւն ստանալու ի հիմնել մեծամեծ հրէական գաղթականութիւններ ի Թուրքիա: Ռուսիայէն բազմութիւն Հրէից շարունակ կը հասնին օսմանեան մայրաքաղաքն:

—Հայկական Միութեան Յուլիս 2ի նստին մէջ Տր. Մ Տատրեան ատենախօսեց «բարեկամութեան» վերայ. Ատենախօսն Միութեան հիմնադիր անդամոց մին է:

—Շնորհակալութեամբ ընկալանք «Թովմա Մեծօփեցու Յիշատակարանը» զոր հրատանակած է Տիար Կարապետ Կոստանեաց ի Թիֆլիզ՝ հանգերձ ընդարձակ յառաջաբանով մի:

—Նիւ Եորքի Բժշկական Հանդէսներէն մին կը կարծէ գիտնալ թէ Սուլթան Համիտ թոքախտէ բռնուած է:

—Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխանն անցեալ օր երբ ի Փարիզ կըգտնուէր, Ֆիկարոյին հետեւեալ յայտարարութիւններն ըրած է.—

Ամեն նկատմամբ յառաջագիտ վիճակի մէջ եմք և հանդարտութիւն կը վայելեմք. Փռանսացիք պիտի կըրնան այժմ համոզուիլ այցելելով յառաջիկայ օգոստոս ամսոյ մէջ մեր երկրագործական և արհեստական ցուցահանդէսն: Պիտի տեսնուի յայնժամ թէ Պուլկարիա բոլորովին նորոգուելու ուղղութեան մէջ է, և թէ Ֆռանսա կրնայ անդ վաճառականական շահեր գտնել:

Այսպիսի վաճառական լաւ յարաբերութիւններու բնաւ արգելք չկայ. Մեք բոլորովին ազատ եմք, և մեր նշանաբան «Պուլկարիա Պուլկարներուն» կը նշանակէ թէ զմեզ վեհափառ Սուլթանին, մեր վեհապետի, յարող կապէն գատ, Պուլկարիա չուղեր ու է արտաքին ազդեցութիւն կրել: Մեք համակրութիւն միայն կուզեմք և պիտի ստանամք զայն այն օր յորում համոզուին մարդիկ թէ մեք, զԵւրոպա վեր ի վայր դարձունելու մէտ չարածճի տղայներ լինելէ հեռի, բաղձալով կը բաղձամք խաղաղութիւնն ապահովել պալքան գաւառաց մէջ մեր հաստատութեանց խաղաղ զարգացմամբ: Այդ օր, յուսամ հեռի չէ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐՉԵՐԵՆ

(Զափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարգարան 128 երեսներէ բաղկացեալ և 36 ձևերով բացատրեալ, ինքնուսուցիչ գրքոյկ մ'է զինուորականմարզանաց և մարտագիտական սկզբանց:

Գինն որեւէ հասցէի համար 50 սէնթ կամ երկու և կէս ֆր: Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարկերին 25 զեղջ կը լինի: Կրնայ ստացուիլ «ՀԱՅԹ»ի իմրագրութենէն կամ ուղղակի հեղինակէն, հետեւեալ հասցէով, G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

L'ARMENIE-ARMENA

Անգղիերէն և Ֆրանսերէն ամսաթերթ երկլեզուեան Տարեկան բաժնեգինն է 2 թալէռ և կէս կամ 12 ֆր և կէս

Խմբագիր

M. TCHE'RAZ

33 DE VERE GARDENS, LONDON, W.

ENGLAND

ՓՈԽԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թուրքիա դրամ զրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ դիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ Կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և եւրոպիոյ նշանաւոր քաղաքացի մէջ: Ամերիկաբնակ Հայք որ դրամ զրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի. Կիւլպէնկեան,

53 Cedar St. N.Y.

ՅՈՒՆԱՆԱԿԱՆ Մ. ԱՆՅԿՈՒՆԻ

Constantinople Bazaar (Քոնսթանթինուփ Պազար) մէջ ունի թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի), ուրիշ զանազան թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառակաթեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն: Թէ ապրանք հարազատութեան և թէ գներու հափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն:

Մինչ Սեպտեմբեր հասցէս է—

15 Grand Central Block, Saratoga Springs N. Y.

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐԻ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կըրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով:



**REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.**

A RELIABLE REMEDY FOR

Indigestion, Bilioesness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tablets contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.

Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address

THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tablets are of great value.

Ripans Tablets cure headache.

Ripans Tablets cure constipation.

Ripans Tablets: for liver troubles.

Ripans Tablets: a family remedy.

Ripans Tablets: for sour stomach.

Հայեր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ու է արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ատան:

HAGOPIAN

PHOTO-ENGRAVING CO

3 Great Jones St. New York

Engraving for all purposes of illustration in line & half-tone.

N. DESCHAMPS

Ն. ՏԷՇԱՆ

Վուսթըրի Main (Մէյն) փողոցին 259դ թիւ խանութըն դիմացկուն և ածան կօշիկներ և մոյկեր կը վաճառուին: Պարոն Տէշան շատ քաղաքավար և պարկեշտ գործ ընող մէկն է և ամեն այցելու իրմէն գոհ կը մնայ: Փորձէ և պիտի համոզուիս:

P. SHALJIAN

9 SPRUCE ST. NEW YORK

ԳՐԲԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆՔ

ԳԻՆ ԶՍՓԱՒՈՐ

Կ Ա Ջ Մ Ը Ն Տ Ի Ր

MARK F. COSGROVE

ԿՈՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ԲԸՊՊԸՐՆԵՐ

78 Front St., Corn Bigelow Court

WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուսթըրի մէջ, ուր կրնա գնել ամեն տեսակ կօշիկներ մոյկեր, և կոշիկի ըրպալըներ: Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն:

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 ըր փողոցներու միջև արևելեան կողմն:

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

BUSH & CO

ՊՈԻՇ ԵՒ ԸՆԿ.

Ք Ե Պ Ե Պ Ե Պ Ե Պ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և հափաւոր գնով

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

— «ՀԱՅՔ»-ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէռ 5 սէնթի:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. Գ Ա Ք Ր Ի Է Լ Ե Ա Ն